ՍՏԵՂԾՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

13.10.2014 12:11

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 24.09.2014թ. թիվ 27/6-Լ որոշմամբ ստեղծվել է ՀՀ փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչություն:
Ներկայացուցչությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում փաստաբանների խնդիրների համակարգման և ՀՀ փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացման համար: Որպես ներկայացուցչության նստավայր է սահմանվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքը:
Հյուսիսային ներկայացուցչությունը որպես ՀՀ փաստաբանների պալատի առանձնացված ստորաբաժանում կոչված է համախմբել Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի վարչական տարածքներում գործունեություն ծավալող ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբաններին, վեր հանել վերջիններիս մոտ փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում առաջացող խնդիրները և դրանք ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատին, ինչպես նաև ապահովել ՀՀ փաստաբանների պալատի առջև դրված նպատակների և խնդիրների և փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացումը:
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 26.09.2014թ. թիվ 331-Ա որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչության ղեկավար է նշանակվել փաստաբան Ռուբեն Մարատի Հակոբյանը (արտոնագիր թիվ 833), ով գործելու է ներկայացուցչության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում տրված լիազորագրի հիման վրա:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })